ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

ք.Աշտարակ

2025թ. հուլիսի 22 -ին, N 271 -Ա

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ «ԱՇՏԱՐԱԿ ՔԱՂԱՔԻ Գ. ՂԱՓԱՆՑՅԱՆԻ ԱՆՎԱՆ Հ. 4 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԱՍԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ԱՆՆԱ ՏՈՆՈՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԱՐՁԱԿՈՒՐԴԻ ՄԱՍԸ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ հավելվածի 60-րդ կետով, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 159-րդ հոդվածի 1-ին մասով, 160-րդ հոդվածով, 162-րդ հոդվածի 1-ին մասով, 164-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով Ա.Տոնոյանի 2025 թվականի հուլիսի 21-ի դիմումը՝ ***որոշում եմ***.

1.Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի «Աշտարակ քաղաքի Գ. Ղափանցյանի անվան հ. 4 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչատնտեսական մասի համակարգող Աննա Տոնոյանին տրամադրել ամենամյա արձակուրդի մասը 2024-2025 թվականների ուսումնական տարվա համար 15 աշխատանքային օր տևողությամբ 2025 թվականի հուլիսի 29-ից օգոստոսի 18-ը ներառյալ:

2. Աննա Տոնոյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում «Աշտարակ քաղաքի Գ. Ղափանցյանի անվան հ. 4 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչատնտեսական մասի համակարգողի պարտականությունների կատարումը ժամանակավորապես դնել «Աշտարակ քաղաքի Գ. Ղափանցյանի անվան հ. 4 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարին փոխարինող՝ մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տնօրենի տեղակալ Դիաննա Պապյանի վրա:

3. Աննա Տոնոյանին աշխատանքի մեջ համարել 2025 թվականի օգոստոսի 19-ից:

Ստորագրող
ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ
3510860535

2025-07-22 11:15:38 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ով

Պարտականությունները կատարող՝ Ա.Գրիգորյան